

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
5	Ապրիլ	2019 թ.		Բ	9203876824
[4] Սատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
5	Ապրիլ	2019 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ	
Պայմանագիր			[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար	
			5 Ապրիլ, 2019 թ.	Բ9203876824	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					
ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԿԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ					
[7.1] ՀՂՄ կտրոնի համար					

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	0	1	2	4	1	0	5
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[10] Անվանումը	«ՖԻՆԼՈՈՒ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)							
[11] Բանկային տվյալները	ԱՐԴԵԲՆԲԱՆԿ ՓԲԸ		N 2474602078940000					
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՍԱՍ							
[13] Լրացուցիչ տվյալներ								

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն		N 900011000834					
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՍԱՍ ՄԱՍԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր	Համար						
		Ամսաթիվ						

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
№ Ո/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակություններ)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակակիցը	Միավորի գինը	Զեռյ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ուսերեն-հայերեն թր. գործ թիվ 13201516	ժամ	12	5000		60000
2	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ուսերեն-հայերեն թր. գործ թիվ 09113916	րոպե	800	83.33		66664
3	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ուսերեն-հայերեն ՏՊՈՐՆԻԿՆԻՎԱԿԱՆ ՎԵՐԱՔԵՐՈՂԱՅԻՆ ԵՐԿՐԱՆՈՒՄ	ժամ	8	5000		40000
4	իրավաբանական բանավոր թարգմանություն-պարսկերեն-հայերեն վթարի վերաբերյալ կոլոկերով	ժամ	9	7000		63000
5	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ուսերեն-հայերեն թր. գործ թիվ 27109516	ժամ	31	5000		155000
6	իրավաբանական գրավոր թարգմանություն հայերենից ուսերեն թր. գործ թիվ 27109516	նիշ	332666	1.39		462405.74
7	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ուսերեն-հայերեն թր. գործ թիվ 10121816	րոպե	445	83.33		37081.85
8	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ուսերեն-հայերեն թր. գործ թիվ 09116716	րոպե	740	83.33		61664.2
9	իրավաբանական գրավոր թարգմանություն իսպաներենից հայերեն թր. գործ թիվ 69110515	նիշ	42468	3.05		129527.4

10	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 51103514	րուպե	2915	83.33		242906.95
11	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 11131316	րուպե	505	83.33		42081.65
12	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 18106316	րուպե	2450	83.33		204158.5
13	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 58208516	րուպե	775	83.33		64580.75
14	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 90358216	րուպե	280	83.33		23332.4
15	իրավաբանական բանավոր թարգմ. հայերեն-ռուսերեն-հայերեն Լ.Իսոյանի վերաբերյալ նյութերով	ժամ	6	5000		30000
16	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 12126516	ժամ	6.5	5000		32500
17	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 60104016	րուպե	185	83.33		15416.05
18	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 14135616	րուպե	2200	83.33		183326
19	իրավաբանական գրավոր թարգմանություն հայերենից ֆրանսերեն քր. գործ թիվ 17134509/1	նիշ	118388	2.5		295970
Ընդամենը						2209615.49

Մատայություն
մատուցող
(աշխատանք
կատարող)

SHAHINYAN VARDUHI 7803710425

Մատայություն
(աշխատանք)
ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

05/04/2019 11:35:52



Ո Ր Ո Շ ՈՒ Մ
թարգմանիչ ճանաչելու մասին

18.05.2016թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոնի Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Ռ. Նավասարդյանի վերանայելով վարույթում քննվող թիվ 13201516 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Չ Ե Ց Ի

2016թ.-ի մայիսի 16-ին՝ ժամը 16:30-ի սահմաններում, ունեցավ Սուրիկը, Հովհիկը ու ևս 2-3 անհայտ անձինք, չպարզված հանգամանքների շուրջ առաջացած վիճաբանության ժամանակ՝ Հայկ Մեղի Պետրոսյանին, Վահե Անդրանիկի Մնացականյանին և Արտյոն Էդիկի Արովյանին կանչել են Երևան քաղաքի Նալբանդյան 28 հասցեում գտնվող ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության վարչական շենքի ծառայողական մուտքի դարպասներից ներս, որտեղ ևս մի քանի անհայտ անձանց հետ միասին ծեծի են ենթարկել նրանց, որի ընթացքում Հայկ Պետրոսյանին դիտավորությամբ պատճառել են գլխուղեղի սալջարդ և քթի ոսկրերի կոտրվածք, իսկ Վահե Մնացականյանին՝ ծնոտի կոտրվածք:

Գեպքի առթիվ 2016 թվականի մայիսի 17-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրքի 113 հոդվածի 2-րդ մասի 1-րդ և 3-րդ կետերի հատկանիշներով հարուցվել է թիվ 13201516 քրեական գործը, որը նախաքննության կատարման համար ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի:

17.05.2016թ.-ին թիվ 13201516 քրեական գործը վարույթ է ընդունվել իմ կողմից:

Նախաքննության ընթացքում գործով վկա Ասատուր Հակոբի Նորդիկյանի մասնակցությամբ անհրաժեշտ է կատարել քննչական և դատավարական գործողություն/ներ/, սակայն վերջինս չէ տիրապետում գրավոր հայերենին, այլ տիրապետում է գրավոր և բանավոր ռուսերենին:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերենով, ուստի անհրաժեշտ է ներգրավել թարգման:

Գագիկ Ավետիքի Շիրմազանյանը ազատորեն տիրապետում է գրավոր և բանավոր հայերենին ու ռուսերենին և ունի թարգմանչի որակավորում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր.-ի 15 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 83 հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարույթում քննվող թիվ 13201516 քրեական գործով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել Գագիկ Ավետիքի Շիրմազանյանին («Ֆինլու» ՍՊԸ) և նրան ճանաչել որպես թարգմանիչ:

2. Թարգմանիչ Գ. Շիրմազանյանին պարզաբանել ՀՀ քր. դատ. օր.-ի 83 հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քր. օր.-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:


Ավագ քննիչ՝



Ս.Ռ. Նավասարդյան

Որոշմանը ծանոթացա, ինձ պարզաբանվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 83 հոդվածով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել են ակնհայտ սուտ թարգմանություն կատարելու համար ՀՀ քր. օր.-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Գ. Շիրմազանյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Թարգմանիչ ներգրավելու մասին

« 23 » մայիսի 2016թ.

ք.երևան

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ՝ Ա.Ս.Հայրապետյան, քննարկելով վարույթիս թիվ 09113916 քրեական գործի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2016թ.-ի ապրիլի 30-ին՝ ժամը 11:40-ի սահմաններում Արամայիս Սուրենի Թանդիլյանը ուրիշի գույքի զգալի չափի գաղտնի հափշտակություն կատարելու դիտարկությամբ, Արթուր Միքայելի Հարությունյանի հետ միասին նստել է թիվ 40 երթուղային փաքսին: Երթևեկության ընթացքում, Երևան քաղաքի Զ.Սարկավազի փողոցում Արամայիս Թանդիլյանը ուղևորուհի Սուսաննա Ալի Ասղար Ասղարիի պայուսակից Արթուր Հարությունյանի օժանդակությամբ՝ ուղևորների տեսադաշտը փակելով, գաղտնի հափշտակել է զգալի չափի՝ 2000 ՀՀ դրամ արժողության դրամապանակը, որի մեջ եղել է 15.000 ՀՀ դրամ և պահել իր մոտ: Այնուհետև երթուղային փաքսին կանգ է առել Երևան քաղաքի Զ.Սարկավազի 48-րդ հասցեի հարակից կանգառում, որտեղ Արամայիս Թանդիլյանը և Արթուր Հարությունյանը մեքենայից դուրս են եկել և հեռացել: Սակայն երթուղայինի վարորդ Գոռ Սարիբեկի Սաֆարյանը՝ տեղեկանալով, որ վերջիններս կատարել են գաղտնի հափշտակություն, հետապնդել է նրանց և վազելով նրանց հետևից բղավել, որ կանգնեն, որի ծայնը լսելուց հետո Արամայիս Թանդիլյանը և Արթուր Հարությունյանը գիտակցել են, որ կատարված գաղտնի հափշտակությունը բացահայտվել է և սկսել են ավելի արագ վազել դեպի մոտակայքում կայանված փաքսի ավտոմեքենան, սակայն հենց այդտեղ՝ նշված ավտոմեքենայի մոտ բռնվել են Գոռ Սաֆարյանի կողմից՝ չկարողանալով հանցագործությունն ավարտին հասցնել իրենց կամքից անկախ հանգամանքներով:

Դեպքի առթիվ 2016թ.-ի մայիսի 10-ին ՀՀ Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 34-176-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 09113916 քրեական գործը կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում Արթուր Հարությունյանը հայտարարել է, որ չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ ազատորեն տիրապետում է ռուսերեն գրավոր լեզվին, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի պահանջներով:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարույթիս թիվ 09113916 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Ֆինլոու» ՍՊԸ-ի աշխատակից՝ գազիկ Շիրմազանյանին, որին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածը և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քանաքեռ-Զեյթուն քննչական բաժնի ավագ քննիչ՝

Ա.Ս.Հայրապետյան

Որոշման հետ ծանոթացա, իմ իրավունքները և պարտականությունները ինձ պարզաբանված են Թարգմանիչ՝

«23» մայիսի 2016թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, արդարադատության մայր Ն. Ստեփանյան, քննարկելով Տատյանա Վլադիմիրի Պրոննիկովայի հաղորդման վերաբերյալ նախապատրաստված նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Յ Ի

Տատյանա Վլադիմիրի Պրոննիկովան 2016 թվականի մայիսի 13-ին ոստիկանության Նոր Նորքի բաժնի Ավանի բաժանմունքում հաղորդում է տվել այն մասին, որ 2016 թվականի մայիսի 09-ին ժամը 16:00-ի սահմաններում իրենց՝ Երևան քաղաքի Ավան Դուրյան քաղամասի 56 շենքի թիվ 45 բնակարանում տեղի ունեցած կենցաղային վիճարանության ժամանակ ամուսինը՝ Սևակ Վարուժանի Միրաբյանը ձեռքերով հարվածներ է հասցրել մարմնի տարբեր հատվածներին և պատառաքաղով հարվածել է աջ ուսին՝ պատճառելով մարմնական վնասվածք:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ Տատյանա Վլադիմիրի Պրոննիկովան չի տիրապետում հայերեն բանավոր և գրավոր լեզվին, տիրապետում է ռուսերեն բանավոր և գրավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ Տատյանա Պրոննիկովան չի տիրապետում հայերեն բանավոր և գրավոր խոսքին, իսկ «Ֆինլու» ՍՊԸ-ի տնօրեն, թարգմանիչ Վարդուհի Ավետիսի Շահինյանը ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, ունի բարձրագույն կրթություն. շահագրգռված չի գործի ելքով, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Յ Ի

Տատյանա Վլադիմիրի Պրոննիկովայի հաղորդման վերաբերյալ նախապատրաստված նյութերով «Ֆինլու» ՍՊԸ-ի տնօրեն Վարդուհի Ավետիսի Շահինյանին ճանաչել թարգմանիչ նրան պարզաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝

Նառա Ստեփանյան

Ճանոթացա որոշմանը, ինձ պարզաբանվել են իմ իրավունքներն ու պարտականությունները:

Թարգմանիչ՝

Վարդուհի Շահինյան

Որոշում
Թարգմանիչ ճանաչելու մասին

27-ը մայիսի 2016թ.

քաղաք վեղի

Արարատի քննչական բաժնի ավագ քննիչ Ս. Զոհրաբյանս, քննարկելով վթարի վերաբերյալ նախապատրաստվող նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Յ Ի՝

2016թ. մայիսի 26-ին ժամը 18-ի սահմաններում Երևան-Մեղրի ավտոճանապարհի 80 կմ-ի՝ Տիգրանաշեն գյուղի հատվածում Արեն Վլադիմիրի Եսայանն իր վարած «Մերսեդես» մակնիշի 96 ZQ 900 հ/հ ավտոմեքենայով բախվել է Մոզհադդասի Մասիդ Յոուֆի վարած «Իվեգո» մակնիշի 95B315/10 հ/հ բեռնատար ավտոմեքենային, որի հետևանքով նշված ավտոմեքենաների վարորդները ստացել են մարմնական վնասվածքներ և տնդատիվել հիվանդանոց:


Դեպքի առթիվ Արարատի քննչական բաժնում նախապատրաստվում են նյութեր:

Նյութերի նախապատրաստման ընթացքում անհրաժեշտություն է առաջացել բացատրություն վերցնել Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Մոզհադդասի Մասիդ Յոուֆին, որը չի տիրապետում քրեական դատավարության լեզվին՝ հայերեն գրավոր լեզվին, ուստի ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր. 15-րդ, 83-րդ և 55-րդ հնդվածներով,

Որոշնցի՝

1. Վթարի վերաբերյալ նախապատրաստվող նյութերով պարսկերենից հայերեն թարգմանություն իրականացնելու համար որպես թարգմանիչ ճանաչել «Ֆինլոու» ՍՊԸ-ի պարսկերեն լեզվի թարգմանիչ Հնրոս Ղահրամանի Դիդարյանտին, նրան բացատրել ՀՀ քր. դատ. օր. 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քր. օր. 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:
2. Որոշման մասին հայտնել Հ.Դիդարյանտին:

Ավագ քննիչ՝



Ս.Զոհրաբյան

Թարգմանչի իրավունքները և պարտականությունները ինձ բացատրվել են որոշման պատճեն ստացւս՝

Թարգմանիչ՝



„27“ 05 2016թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԱՐԳՄԱՆԻՉ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«02» հունիսի 2016թ.

ք.Արտաշատ

Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Գ.Մանասերյանս,
քննարկելով վարույթումս գտնվող թիվ 27109516 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Չ Ե Ց Ի՝

Արարատի մարզի Վ.Դվին գյուղի բնակիչներ Ներսես Ծատուրի
Կարապետյանը, Իվո Լյովայի Ալավերդյանը և Թելման Կոստանի Աբրամովը խմբի
կազմում, նախնական համաձայնությամբ, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն
կատարելու դիտավորությամբ, 2016թ. ապրիլի 25-ից մայիսի 10-ն ընկած
ժամանակահատվածում, չորս տարբեր օրերի եվրոպական արտադրության
պատուհանը բացելու եղանակով՝ ապօրինի մուտք են գործել Արարատի մարզի
Վ.Դվին գյուղի միջնակարգ դպրոցի պահեստասենյակ և այնտեղից գողացել են
զգալի չափերով՝ 50.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության 35 թև սառեցրած հավ:

Դեպքի առթիվ 26.05.2016թ. որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ
հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով հարուցվել է թիվ 27109516 քրեական
գործը:

Նկատի ունենալով, որ քրեական գործով կասկաստյալ Թելման Կոստանի
Աբրամովը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, իսկ ՀՀ քր. դատ. օր.-ի 15-րդ
հոդվածի համաձայն քրեական դատավարությունը տարվում է հայերեն, ուստի
ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր.-ի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

Վարույթումս գտնվող թիվ 27109516 քրեական գործով թարգմանություն
կատարելու համար որպես թարգմանիչ ճանաչել ,, Ֆինլոու,, ՍՊԸ-ի աշխատակից
Անուշ Սուրենի Խանիկյանին /ծնված՝ 04.10.1973թ, բնակվում է ք.Երևան 16 թաղ.
14/29/ նրան բացատրել ՀՀ քր. դատ. օր. -ի 83-րդ հոդվածով նախատեսված իր
իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացնել
ականհայտ սխալ թարգմանություն կատարելու, առանց քննիչի թույլտվության
նախնական քննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քր. օր.-ի 338 և 342-րդ
հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝

Գ.Մանասերյան

Որոշումն ինձ հայտնվել է, պարզաբանվել իմ
իրավունքներն ու պարտականությունները

Ա.Խանիկյան

«02» հունիսի 2016թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ ձանաչելու մասին

03 հունիսի 2016թ.

ք.Երևան

«Վճարման կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ՝ Ա.Ս.Չոբանյան, քննարկելով վարույթումս քննվող թիվ 10121816 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2016 թվականի մայիսի 6-ին «Էրեբունի» բժշկական կենտրոնից ոստիկանության Մաշտոցի բաժնում ահազանգ է ստացվել, որ «փակ գանգուղեղային վնասվածք» ախտորոշմամբ բուժօգնության է դիմել Արսեն Ժորայի Ղուկասյանը: Մայիսի 7-ին Արսեն Ղուկասյանը հաղորդում է տվել այն մասին, որ մայիսի 4-ին ժամը 16:00-ի սահմաններում Երևան քաղաքի 16-րդ թաղամասին հարակից գործող ավտովագման կետի տարածքում Մանուկ Աշոտի Գյուլշատյանի կողմից գումարային պարտքի շուրջ գրուցելու նպատակով ցանկացել է նստել վերջինիս կողմից վարվող «Օպել» մակնիշի ավտոմեքենան, սակայն վերջինս փորձելով փախչել՝ վարել է ավտոմեքենան, ինչի հետևանքով ինքը ավտոմեքենայից վայր է ընկել և ստացել մարմնական վնասվածք:

Իր հերթին 07.05.2016 թվականին Մանուկ Գյուլշատյանը ոստիկանության Մաշտոցի բաժնում հաղորդում է տվել, որ 2016 թվականի ապրիլ ամսից Արսեն Ղուկասյանը պարբերաբար պահանջել է վերադարձնել իր պարտքը, հակառակ դեպքում հեռախոսով սպառնալով սպանել իրեն:

Ղեկավարելով 2016 թվականի մայիսի 17-ին Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում «Քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 10121816 քրեական գործը:

Նկատի ունենալով, որ քրեական գործի նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել քննչական և դատավարական գործողություններ կատարել Մանուկ Աշոտի Գյուլշատյանի հետ, ով չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին այլ տիրապետում է ռուսերեն լեզվին, իսկ «Վճարման կոմիտեի քրեական դատավարությունը տարվում է հայերեն լեզվով, ուստի նրա հետ քննչական գործողություններ կատարելու համար անհրաժեշտ է ներգրավել թարգմանիչ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 10121816 քրեական գործով Մանուկ Գյուլշատյանի հարցաքննության և այլ քննչական գործողություններ կատարելու համար որպես թարգմանիչ ձանաչել «Ֆինլոու» ՍՊԸ-ի թարգմանիչ Անուշ Սուրենի Խանիկյանին /լիազորագիր թիվ 124/:

2. Թարգմանիչ Անուշ Խանիկյանին պարզաբանել «Քր. դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված թարգմանիչ՝ իր իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նրան նախազգուշացնել «Քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝



Ա.Ս.Չոբանյան

Որոշմանը ծանոթացա, ինձ պարզաբանվել է «Քր. դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված թարգմանիչ՝ իմ իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար «Քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Ա.Խանիկյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ ներգրավելու մասին

<<04>> հունիսի 2016թ.

ք. Երևան

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ՝ Ա.Մ.Քոչարյանս, քննարկելով վարույթիս թիվ 09116716 քրեական գործի նյութերը

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2016 թվականի հունիսի 2-ի ժամը 08:20-ից մինչև ժամը 18:35-ն ընկած ժամանակահատվածում անհայտ անձն ուրիշի գույքը գաղտնի հափշտակելու դիտարկությամբ, հարմարեցված բանալիով բացել է Երևան քաղաքի Ռուբինյանց 21 շենքի 21 բնակարանի մուտքի դռան փականը, ապօրինի մուտք է գործել ներս և գաղտնի հափշտակել Ալեքսանդր Միխայելի Մորոզովին պատկանող՝ խոշոր չափերի՝ 1.432.000 ՀՀ դրամին համարժեք 200.000 ՌԴ ռուբլի, 20.000 ՀՀ դրամ և 47.500 ՀՀ դրամ արժողության «Պիեռ Կառոեն» ֆիրմայի ձեռքի ժամացույց:

Դեպքի առթիվ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում 2016թ. հունիսի 2-ին ՀՀ քր. օր-ի 177-րդ հովածի 3-րդ մասի 1.1 կետով հարուցվել է թիվ 09116716 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

03.06.2016թ. քրեական գործի հետագա նախաքննությունը հանձնարարվել է ինձ:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ տուժող Ալեքսեյ Միխայիլի Մորոզովը, Մարինա Ալեքսանդրի Մորոզովան և Ալեքսանդր Սերգեյի Կուչերուկը չեն տիրապետում հայերեն բանավոր և գրավոր լեզվին, այլ ազատորեն տիրապետում է ռուսերեն բանավոր և գրավոր լեզվին, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածի պահանջներով:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Վարույթիս թիվ 09116716 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Ֆինլոու» ՍՊ ընկերության տնօրեն՝ թարգմանիչ Վարդուհի Ավետիսի Շահինյանին /անձնագիր AH 0512851, տրված 13.12.2007թ. 004-ի կողմից/, որին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ՝

Ա.Մ.Քոչարյան

Որոշման հետ ծանոթացա, իմ իրավունքները և պարտականությունները ինձ պարզաբանված են Թարգմանիչ՝

Վ. Եսեկևյան

« 04 » հունիսի 2016թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

թարգմանիչ հրավիրելու մասին

բազ. - հայ

Հոն/բթ

42468 ԵԿ/

«06» հունիսի 2016թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Թ.Նալբանդյան, վերանայելով վարույթունս գտնվող թիվ 69110515 քրեական գործի նյութերը

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության վարույթուն է գտնվում ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցված թիվ 69110515 քրեական գործը՝ անհայտ անձի կողմից համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ Սոֆյա Պիրադյանից խոշոր չափերով գումար հափշտակելու դեպքի վերաբերյալ:

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել կատարել իսպաներեն գրավոր թարգմանություններ և որ «Ֆին Լոու» ՍՊ ընկերության աշխատակից Աննա Արարատի Հովհաննիսյանն ունի իսպաներեն լեզվով թարգմանչի վասնագիտություն, քրեական գործով շահագրգռված չէ, ուստի դեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 69110515 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել Աննա Արարատի Հովհաննիսյանին /ծնված՝ 25.01.1982թ. Հայաստանի Հանրապետություն, անձնագիր՝ AN0265821, տրված՝ 19.11.2012թ. 001/:
2. Թարգմանիչ Աննա Հովհաննիսյանին պարզաբանել նրա պարտականություններն ու իրավունքները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, որի մասին նրան հայտնել ստորագրությամբ:

ՀԿԳ ավագ քննիչ՝

Թ.Նալբանդյան

Սույն որոշումն ինձ հայտնվել է, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններն ու իրավունքները:

Թարգմանիչ՝

Ա.Հովհաննիսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
թարգմանիչ հրավիրելու մասին

06.հունիսի.2016թ.

Ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Յու.Իվանյանս, քննարկելով վարույթումս քննվող թիվ 51103514 քրեական գործի նյութերը

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2014թ. դեկտեմբերի 20-ին ՀՀ քննչական կոմիտեից Սյունիքի մարզային քննչական վարչության Սիսիանի քննչական բաժին է ստացվել ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում նախապատրաստված նյութերն այն մասին, որ «ԱրմենՏել» ՓԲ ընկերության հետ 2010թ. հուլիսի 9-ին կնքած պայմանագրի համաձայն «Արդիմպեքս» ՍՊ ընկերությունը 2010թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին Սիսիան-Տաթև հատվածում իրականացրել է օպտիկական մալուխի շինմոնտաժային աշխատանքներ, որի ընթացքում «ԱրմենՏել» ՓԲ ընկերության տեխնիկական բլրկի պատասխանատու աշխատակիցներ՝ Ֆիքսված կապի ցանցերի շինարարության և նախագծերի իրականացման ծառայության ղեկավար Հայկ Թառումյանը, նույն ծառայության մուտքային ցանցերի շինարարության բաժնի ավագ ճարտարագետ Արմեն Մուրադյանը և մայրուղային հիմնացանցի շինարարության բաժնի ավագ ճարտարագետ Ռուբեն Իսրայելյանը, հանդիսանալով առևտրային կազմակերպության ծառայողներ, իրենց լիազորություններն օգտագործել են «ԱրմենՏել» ՓԲ ընկերության շահերին հակառակ, այն է՝ «Արդիմպեքս» ՍՊ ընկերությունը շինմոնտաժային աշխատանքների իրականացման ընթացքում «ԱրմենՏել» ՓԲ ընկերության նշված աշխատակիցների գիտությամբ և առանց ընկերության տնօրինության հետ համաձայնեցման, կատարել է նախագծի և հողային գրունտի կարգի փոփոխություններ, որի արդյունքում կատարված աշխատանքների դիմաց «ԱրմենՏել» ՓԲ ընկերությունից ստացել է 23.719.716 ՀՀ դրամ հավելյալ գումար: Բացի այդ, «ԱրմենՏել» ՓԲ ընկերության հետ 2010թ. հունիսի 28-ին նախապես կնքած պայմանագրին կից դեկտեմբերի 27-ին ստորագրել է լրացուցիչ համաձայնագիր Ջերմուկ-Ծովակ տարածքում օպտիկական մալուխի շինմոնտաժային աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ և ներկայացրել է խրամուղիների փորման ու գրունտի կարգի շրջանակային պայմանագրով նախատեսվածից բարձր գներ, իսկ Հայկ Թառումյանը, օգտագործելով իր լիազորություններն «ԱրմենՏել» ՓԲ ընկերության շահերին հակառակ, ընդունել է «Արդիմպեքս» ՍՊ ընկերության առաջարկը, որի արդյունքում վերջինս կատարված աշխատանքի դիմաց «ԱրմենՏել» ՓԲ ընկերությունից ստացել է 14.941.500 ՀՀ դրամ հավելյալ գումար:

Նախապատրաստված նյութերով 2014թ. դեկտեմբերի 20-ին Սիսիանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 51103514 քրեական գործը:

Նախաքննությամբ պարզվել է նաև, որ «ԱրմենՏել» ՓԲ ընկերության կողմից մալուխների ձեռք բերման նպատակով 2014 թվականի ընթացքում անցկացվել են ARM-T 021/14, ARM-T 025/14, իսկ 2015 թվականին՝ ARM-T 004/15 բաց մրցույթները: Պարզվել է, որ վերը նշված մրցույթների արդյունքներով տարբեր մատակարար կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի հիման վրա «ԱրմենՏել» ՓԲ ընկերությունը ձեռք է բերել «ՍՄՔ» 5-րդ կատեգորիայի մալուխ՝ էականորեն միմյանցից տարբեր գներով:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Քարգմանիչ ներգրավելու մասին

08 հունիսի 2016թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Տ.Շոխոյանս, վերանայելով թիվ 11131316 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2016թ. ապրիլի 21-ի՝ ժամը 15.00-ից մինչև 2016թ. ապրիլի 26-ը՝ ժամը 10.15-ն ընկած ժամանակահատվածում, անհայտ անձը, բացելով Երևան քաղաքի Ֆրունզե փողոցի 6/5 շենքի վերելակի մեխանիկական սրահի մուտքի դռան կողպեքը, ապօրինի մուտք է գործել մեխանիկական սրահ և այնտեղից գաղտնի հափշտակել է վերելակի արգելակման կոճը:

Դեպքի առթիվ 26.04.2016թ. Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հարուցվել է թիվ 11131316 քրեական գործը:

Ռաֆիկ Սամվելի Սեդրակյանը, ուրիշի գույքը գաղտնի հափշտակելու դիտավորությամբ, 2016թ. մայիսի 10-ին՝ ժամը 23.30-ից մինչև 2016թ. մայիսի 11-ը՝ ժամը 09.00-ն ընկած ժամանակահատվածում, բացելով Երևան քաղաքի Եղիշե Թադևոսյան փողոցի 12/7 շենքի 1-ին մուտքի 9-րդ հարկում գտնվող Արարատ Վարդանյանին պատկանող խորդանոցի մուտքի դուռը, ապօրինի մուտք է գործել նշված խորդանոց և այնտեղից գաղտնի հափշտակել 1 հատ ինքնատեռ, 1 շիշ օղի, 36 հատ օղու և հյութի բաժակներ՝ Ա.Վարդանյանին պատճառելով զգալի չափի՝ 20.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Բացի այդ, Ռաֆիկ Սամվելի Սեդրակյանը, ուրիշի գույքը գաղտնի հափշտակելու դիտավորությամբ, 2016թ. մարտ ամսին չպարզված օրը, ժամը 03.00-ի սահմաններում, բացելով Երևան քաղաքի Բագրատունյաց պողոտայի 4-րդ նրբանցքի 36/1 շենքի 5-րդ հարկում գտնվող խորդանոցի մուտքի դուռը, ապօրինի մուտք է գործել նշված խորդանոց և այնտեղից գաղտնի հափշտակել է զգալի չափի արհեստագործական գործիքներ և կենցաղային տարբեր իրեր:

Բացի այդ, Ռաֆիկ Սամվելի Սեդրակյանը, ուրիշի գույքը գաղտնի հափշտակելու դիտավորությամբ, 2016թ. ապրիլի 2-ին՝ ժամը 00.30-ից մինչև ժամը 09.00-ն ընկած ժամանակահատվածում, փորձել է Երևան քաղաքի Եղիշե Թադևոսյան փողոցի 12/7 շենքի 1-ին մուտքի 4-րդ հարկում գտնվող Ռոբերտ Սաֆարյանին պատկանող խորդանոցի մուտքի դուռը բացելու եղանակով ապօրինի մուտք գործել ներս, չկարողանալով բացել խորդանոցի մուտքի դուռը՝ հանցագործությունն իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողացել ավարտի հասցնել:

Դեպքի առթիվ 07.06.2016թ. Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հարուցվել է թիվ 11141316 քրեական գործը:

Կատարված նախաքննությամբ պարզվել է, որ Ֆրունզե փողոցի 6/5 շենքի վերելակի արգելակման կոճը գաղտնի հափշտակել է Ռաֆիկ Սամվելի Սեդրակյանը:

Նկատի ունենալով, որ թիվ 11131316 և թիվ 11141316 քրեական գործերով առերևույթ հանցագործությունները կատարվել են միևնույն անձի՝ Ռաֆիկ Սամվելի Սեդրակյանի կողմից, ուստի 07.06.2016թ. որոշում է կայացվել նշված քրեական գործերը միացնել իրար և նախաքննությունը շարունակել մեկ վարույթում, իսկ քրեական գործին շնորհվել է 11131316 համարը:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ գործով կասկածյալ Ռաֆիկ Սեդրակյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, տիրապետում է ռուսերեն գրավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ Ռաֆիկ Սեդրակյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, տիրապետում է ռուսերեն գրավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է հնարավորություն ընձեռնել նրան թարգմանչի օգնությամբ իրականացնել քրեադատավարական օրենքով սահմանված իր իրավունքները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Որպես թարգմանիչ հրավիրել «Ֆինլոու» ՍՊԸ-ի թարգմանիչ Ծովինար Խոսրովի Թորոսյանին, ով ազատորեն տիրապետում է ռուսերեն և հայերեն գրավոր ու բանավոր լեզվին, կարող է կատարել թարգմանություն հայերենից ռուսերեն և հակառակը, գործով չչահագրգռված անձ է:

2. Թարգմանիչ Ծովինար Խոսրովի Թորոսյանին պարզաբանել իր պարտականությունները և իրավունքները ու նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության վերաբերյալ, որի մասին նրան հայտնել ստորագրությամբ:


Ավագ քննիչ՝



Տ.Տ.Շոխոյան

Սույն որոշումը ինձ հայտնվել է, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանել եմ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանիչ պարտականություններն ու իրավունքները:

Թարգմանիչ՝



Ը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ հրավիրելու մասին

22 հունիսի 2016թ.

ք. Գյումրի

«Քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վաչության ավագ քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ՝ Ա.Տ.Մնոյանս, քննարկելով 18106316 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ց Ի

2016 թվականի հունիսի 20-ին, ժամը 15:20-ին, Գյումրի քաղաքի բնակիչ Ռիտա Ալբերտի Հակոբյանը զանգահարել է «Ռուսականության օպերատիվ կառավարման կենտրոն և հայտնել, որ Գյումրու «Ֆանտաններ» թաղամասում բնակվող ամուսնու՝ Սարգիս Կոստանտինի Հակոբյանի հարևաններն իրեն հայտնել են, որ մի քանի օր է ինչ ամուսինը և վերջինիս մայրը՝ Սիրիկ Ռուբենի Հակոբյանը չեն արձագանքում, վերջիններիս տնակից տհաճ հոտ է գալիս և ենթադրում են, որ նրանք տնակում մահացել են:

Նույն օրը դեպքի վայրի զննության ժամանակ Գյումրի քաղաքի 228/268 տնակում հայտնաբերվել են նույն տնակի բնակիչներ՝ 01.06.1936 թվականին ծնված Սիրիկ Ռուբենի Հակոբյանի և 09.04.1960 թվականին ծնված Սարգիս Կոստանտինի Հակոբյանի դիակները:

Փաստի առթիվ «Քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում նախապատրաստվել են նյութեր:

Նյութերի նախապատրաստման ընթացքում նշանակվել են դիակի դատաբժշկական փորձաքննություններ:

21.06.2016 թվականին տրված մահվան մասին բժշկական Ն 20609150191 վկայականի համաձայն՝ Սիրիկ Ռուբենի Հակոբյանի մահվանը հանգեցնող անմիջական վիճակը հանդիսացել է գլխուղեղի կենսական կարևոր ֆունկցիաների սուր խանգարումը, որին բերել է փակ բուֆ գանգուղեղային վնասվածքը:

21.06.2016 թվականին տրված մահվան մասին բժշկական Ն 20609150191 վկայականի համաձայն՝ Սարգիս Կոստանտինի Հակոբյանի մահվանը հանգեցնող անմիջական վիճակը հանդիսացել է գլխուղեղի կենսական կարևոր ֆունկցիաների սուր խանգարումը, որին բերել է փակ բուֆ գանգուղեղային վնասվածքը, որից բացի հայտնաբերվել է նաև ձախից 5-6-րդ կողոսկրերի կոտրվածքներ:


Փաստի առթիվ 21.06.2016 թվականին «Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցվել է 18106316 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:


Նկատի ունենալով, որ սույն քրեական գործով վկա Անժելիկա Խորենի Ենոքյան չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր, հայերեն բանավոր լեզվին, ուստի ղեկավարվելով «Քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. 18106316 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել "Ֆինլու" ՍՊ ընկերության աշխատակից՝ թարգմանիչ Երանուհի Ամատունու Բահարյանին /ունի լիազորագիր, տիրապետում է հայերեն, ռուսերեն գրավոր և բանավոր լեզուներին, կարողանում է կատարել թարգմանություններ գրավոր և բանավոր՝ հայերենից ռուսերեն և ռուսերենից հայերեն լեզուներով:

2. Երանուհի Ամատունու Բահարյանը նախազգուշացնել է ակնհայտ կեղծ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, նրան միաժամանակ ծանոթացնել թարգմանի իրավունքների և պարտականությունների հետ:

Վարչության ավագ քննիչ՝  Ա.Տ.Մտոյան

Իրավունքներին և պարտականությունների ցանկը ստացա,
Ծանոթացա որոշմանը՝  Ե.Բահարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Քրեական գործով թարգման հրավիրելու մասին

<<24>> հունիսի 2016թ.

ք. Երևան

«Քննչական կոմիտեի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ա. Խաչատրյանս, վերանայելով թիվ 58208516 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Չ Ե Ց Ի

«Երևանի թիվ 120 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Քերոբյանի վերաբերյալ նախապատրաստված նյութերը ստացվել են «ԱԱԾ քննչական վարչությունում 2016 թվականի մայիսի 26-ին:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ «Երևանի թիվ 120 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անահիդա Քերոբյանն, ի պաշտոնե տնօրինելով կազմակերպությանը հատկացված ֆինանսական միջոցները, առանձնապես խոշոր չափերով գումար յուրացնելու միասնական դիտավորությամբ մանկապարտեզի աշխատակիցների հաստիքների հիման վրա ձևակերպել է անձանց, որոնք իրականում աշխատանքի չեն հաճախել և օգտագորգելով պաշտոնեական դիրքը, ինչպես նաև այդ անձանց բանկային քարտերը, բյուջեից որպես նշված աշխատակիցների աշխատավարձ փոխանցված և իրեն վստահված գումարներից 2011 թվականից մինչև 2016 թվականի մայիս ամիսն ընկած ժամանակահատվածում յուրացրել է ընդհանուր առմամբ առնվազն 6.274.679 « դրամ: Մասնավորապես՝ յուրացրել է որպես նշված մանկապարտեզի հավաքարարներ ձևակերպված Սոնյա Շարոյանի և Գոհար Ազնաուրյանի աշխատավարձ հատկացված 429.860 « դրամը և 355.273 « դրամը, որպես փոխարինեզ դաստեարակներ ձևակերպված իր քրոջ և թոռնուհու՝ Մարետա Սումբատյանի և Մարիամ Ամիրխանյանի աշխատավարձ հատկացված 1.071.000 « դրամը և 285.846 « դրամը, որպես գիշերային պահակ և էլեկտրիկ ձևակերպված Միհրան Գևորգյանի աշխատավարձ ձևակերպված գումարներից՝ 2.172.700 « դրամը և որպես պահակ-բանվոր ձևակերպված՝ Վարդիթեր Ութուջյանի աշխատավարձ հատկացված գումարներից՝ 1.960.000 « դրամ:

Սույն թվականի հունիսի 2-ին «ԱԱԾ քննչական վարչությունում «Քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 58208516 քրեական գործը:

Նույն օրը կայացվել է որոշում՝ թիվ 58208516 քրեական գործն ըստ ենթակայության ուղարկել մասին:

Սույն թվականի հունիսի 13-ին «Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչությունից Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին է ստացվել թիվ 58208516 քրեական գործը և նույն օրը նախաքննության կատարումը հանձնարարվել է ինձ:

ՈՐՈՇՈՒՄ
Թարգմանիչ հրավիրելու մասին

27 հունիսի 2016թ.

ք. Գյումրի

ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ տասներորդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Հ.Սարգսյանի վերանայելով վարույթումս քննվող թիվ 90358216 քրեական գործի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

«Ա» քաղաքացի, Շիրակի մարզի Երազգավորս գյուղի բնակիչ, 14.12.1997թ. ծնված Արկադի Գևորգի Սարգսյանը 26.12.2013թ. «Ա» ՊՆ Ախուրյանի զինկոմիսարիատում անցել է կցագրում, ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար և հասնելով զորակոչային տարիքի, ծառայությունից ազատվելու «Ա» օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում՝ խուսափել է ժամկետային զինվորական ծառայության 2015թ. ձմեռային զորակոչից:

Դեպքի առթիվ 25.02.2016թ. «Ա» քննչական կոմիտեի ՋԲԳՎ տասներորդ կայազորային քննչական բաժնում «Ա» քր. օր-ի 327-րդ հոդ. 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 90358216 քրեական գործը:

21.04.2016թ. որոշում է կայացվել Ա.Սարգսյանին «Ա» քր. օր-ի 327-րդ հոդ. 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում և որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

25.04.2016թ. որոշում է կայացվել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին՝ «Ա» քր. դատ. օր-ի 31-րդ հոդ, 1-ին մասի 2-րդ կետի հիմքով:

27.06.2016թ. «Ա» ոստիկանության Ախուրյանի բաժնից գրություն է ստացվել այն մասին, որ նույն օրը Երևան քաղաքի «Ձվարթնոց» օդանավակայանի գծայի բաժնից ոստիկանության Ախուրյանի բաժնի է բերման ենթարկվել թիվ 90358216 քրեական գործով մեղադրյալ Շիրակի մարզի Երազգավորս գյուղի բնակիչ 14.12.1997թ. ծնված՝ Արկադի Գևորգի Սարգսյանը:

27.06.2016թ. Արկադի Գևորգի Սարգսյանը ներկայացվել է քննչական բաժնի:

Նկատի ունենալով, որ մեղադրյալ Արկադի Գևորգի Սարգսյանը չի տիրապետում «Ա» քրեական դատավարության գրավոր լեզվին և տիրապետում է, ուսերենին, ուստի անհրաժեշտ է հրավիրել թարգմանիչ՝ ուսերենից հայերեն և հակառակը թարգմանություններ կատարելու նպատակով:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Ա» քր. դատ. օր-ի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 90358216 քրեական գործով ուսերենից հայերեն և հայերենից ուսերեն թարգմանություններ կատարելու համար որպես թարգմանիչ հրավիրել «Ֆինլոու ՍՊԸ» թարգմանիչ Ալեքսանդր Ստեփանի Գրիգորյանին, ով ազատորեն տիրապետում է նշված լեզուներին:

2. Որոշման մասին հայտնել Ա. Գրիգորյանին և նրան բացատրել «Ա» քր. դատ. օր-ի 83-րդ հոդ. նախատեսված թարգմանիչի հրավույթները և պարտականությունները:

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝



Հ.Հ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Որոշումն ինձ հայտնված է՝ 27 06 2015թ.
բացատրված են ՀՀ քր. դատ. օր-ի 83-րդ հոդ. նախատեսված իրավունքներս ու
պարտականություններս, միաժամանակ նախազգուշացված եմ քրեական գործով
ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քր. օր-ի 338-րդ հոդ.
նախատեսված քր. պատասխանատվության մասին:

Թարգմանիչ



Ա.Գրիգորյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ հրավիրելու մասին

« 27 » հունիսի 2016թ.

ք. Գյումրի

Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ս.Կիրակոսյանս քննարկելով Լևոն Պողոսի Իսոյանի հաղորդման հիման վրա նախապատրաստվող նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Լևոն Պողոսի Իսոյանը 27.06.2016թ. ոստիկանության Գյումրի քաղաքի Կոմայրիի բաժնում հաղորդում է տվել, որ 04.05.2016թ.-ին մահացած քրոջ՝ Ֆելո Պողոսի Բրոյանի թոռնուհին՝ Թերմինե Արեսի Լիվենսկայան 2016թ. մայիսի 4-ից մինչև հունիսի 25-ն ընկած ժամանակահատվածում հրել բացելու միջոցով վնասել է Ֆելո Պողոսի Բրոյանին պատկանած Գյումրի քաղաքի Սևերսկի թաղամասի 3-րդ շենքի 6-րդ բնակարանի մուտքի դռան փականը և այնտեղից գողացել է տան գույքը:

Դեպքի առթիվ Շիրակի մարզային քննչական վարչությունում նախապատրաստվում են նյութեր. Նկատի ունենալով, որ նախապատրաստվող նյութերով անհրաժեշտ է բացատրություն վերցնել Լևոն Պողոսի Իսոյանից, ով հայերեն գրավոր լեզվին չի տիրապետում, այլ տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին ու թարգմանչի կարիք ունեն:

Ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15, 55 և 83 հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Որպես թարգմանիչ հրավիրել թարգման՝ Երանուհի Ամատունու Բահարյանին՝ բարձրագույն կրթությամբ, տիրապետում է հայերեն, ռուսերեն գրավոր և բանավոր լեզուներին:

2 Երանուհի Ամատունու Բահարյանին նախազգուշացնել ակնհայտ կեղծ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, նրան միաժամանակ ծանոթացնել թարգմանի իրավունքների և պարտականությունների հետ:

ՀԿԳ քննիչ՝



Ս.Կիրակոսյան

Ծանոթացա որոշմանը՝



Ե.Ա. Բահարյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ հրավիրելու մասին

07.07.2016թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի բաժնի ավագ քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ Գ.Ա.Մաթևոսյանս, քննարկելով վարույթիս թիվ 12126516 քրեական գործի նյութերը,

Պ ա ղ Ե ց Ի

2016թ. մայիսի 25-ին՝ ժամը 18:30-ին, Երեբունի բժշկական կենտրոնից ոստիկանության Երեբունու բաժին ահազանգ է ստացվել այն մասին, որ «գանգուղեղային վնասվածք» ախտորոշմամբ իրենց մոտ բուժօգնության է դիմել Ռուստամ Գրիգորյանը: Ըստ հիվանդի հարազատի հայտարարության՝ այդ վիճակով իրեն տեսել է տանը:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ 2016թ. մայիսի 24-ին՝ ժամը 24:00-ի սահմաններում, Ռուստամ Գրիգորյանը գտնվել է իր ընկեր Արսեն Սաֆրազյանի տանը, որտեղ նրանց է միացել նաև Արսենի ընկեր Արթուրը, ովքեր միասին ընթրելուց հետո դուրս են եկել փողոց քայլելու: Հասնելով Երևան քաղաքի Նոր-Արեշ 2-րդ և 11-րդ փողոցների հատման խաչմերուկում գտնվող զրուցարանի մոտ՝ նրանց է միացել նաև Արթուրի ընկեր Ռոբը: Քիչ անց ոմն Արթուրի և Ռուստամ Գրիգորյանի միջև ծագել է վիճաբանություն, որի ժամանակ էլ ինքնությունը չպարզված անձը մեկ անգամ հարվածել է Ռուստամ Գրիգորյանի դեմքին, ինչի արդյունքում վերջինս վայր է ընկել և ստացել մարմնական վնասվածք:

Նույնաբովանդակ բացատրություն է տվել նաև Ռուստամ Գրիգորյանը՝ հրաժարվելով հաղորդում տալուց:

Ռ.Գրիգորյանի ստացած մարմնական վնասվածքների ծանրության աստիճանը և մեխանիզմը պարզելու նպատակով որոշում է կայացվել դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին, սակայն չի ստացվել փորձագետի եզրակացությունը: Համաձայն ՀՀ ԱՆ ԴԲԳԿ կենտրոնի դատաբժիշկ Ս.Հարությունյանի բանավոր հայտարարության՝ Ռ.Գրիգորյանի առողջությանը պատճառվել է կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս և նրա վնասվածքների առաջացումը հնարավոր չէ վայր ընկնելու հետևանքով:

Դեպքի առթիվ 2016 թվականի հունիսի 07-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 12126516 քրեական գործը և կատարվել նախաքննություն:

Նկատի ունենալով, որ տուժող Ռուստամ Գրիգորյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ ազատորեն տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին, իսկ «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊ ընկերության տնօրեն Վարդուհի Շահինյանը ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն գրավոր ու բանավոր լեզուներին, ունի համապատասխան որակավորում, սույն քրեական գործով չչափազորված անձ է, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 12126516 քրեական գործով «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊ ընկերության տնօրեն Վարդուհի Շահինյանին /ծնված 28.03. 1971թ., Անձնագիր՝ AH0512851, տրված 13.12.2007թ. 004-ի կողմից/ ներգրավել որպես թարգմանիչ:
2. Վարդուհի Շահինյանին ծանոթացնել որպես թարգմանչի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներին ու պարտականություններին ու նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

/Թարգմանիչ ներգրավելու մասին/

12 հուլիսի 2016թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության քննիչ՝ Ա.Համգոյանս, վերանայելով վարույթիս թիվ 60104016 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

2016 թվականի մարտի 24-ին ժամը 22:45-ի սահմաններում Երևան քաղաքի Սաֆարյան և Թամրուշ փողոցների խաչմերուկում անհայտ մականիշի և հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել Արա Արմենի Փափազյանին, անզգուշությամբ պատճառել մարմնական վնասվածքներ, որից հետո թողնելով ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը՝ հեռացել է, իսկ Ա.Ա.Փափազյանն անգիտակից վիճակում տեղափոխվել է „Սուրբ Գրիգոր Լուսավորիչ,, ԲԿ: 29.03.2016թ. ժամը 02:30-ին Ա.Ա.Փափազյանը „Սուրբ Գրիգոր Լուսավորիչ,, ԲԿ-ի վերակենդանացման բաժանմունքում գիտակցության չգալով մահացել է:

Դեպքի առթիվ 29.03.2016թ. Երևան քաղաքի քննչական վարչությունում ՀՀ քր. օր-ի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և 244-րդ հոդվածով հարուցվել է թիվ 60104016 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել որպես վկա հարցաքննել Վլադիմիր Գավրիլի Վարտանովին իսկ վերջինս ազգությամբ չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, խոսում է ռուսերեն, գրում է ռուսերեն լեզվով, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. 60104016 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել „Ֆինլուու,, ՍՊԸ-ի տնօրեն, թարգմանիչ՝ Վարդուհի Ավետիսի Շահինյանին /ծնված 28.03.1971թ., բնակվում է ք.Երևան Բաղրամյան 62-րդ շենքի 48-րդ նակարանում/ և վերջինիս բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքները և պարտականությունները:
2. Վարդուհի Ավետիսի Շահինյանին նախազգուշացնել ականայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՔՆՆԻՉ՝  Ա.ՀԱՄԶՈՅԱՆ

Ծանոթացա որոշմանը՝
12.07.2016թ.

